ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026 թվականի N 1440-Ա

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի գ-ենթակետով, ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմամբ և հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ դրույթի սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման 8-րդ կետը, համայնքի բնակիչ Հասմիկ Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Ա.Իսահակյան փող.10 հասցեում 05-002-0121-0007 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ /2023MJXQPY/ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,ինչպես նաև հաշվի առնելով,որ շինությունը կառուցված է իրեն հատկացված հողամասում.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հասմիկ Սերյոժայի Մարտիրոսյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.132 հա տնամերձ հողամասում ինքնակամ/2023MJXQPY/ 2018 թվականին կառուցված 7.59 քմ արտաքին մակերեսով բնակելի տան կիսանկուղային հարկը,58.38քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը,42.66 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկը և 47.34քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը ճանաչել օրինական:
2. Քաղաքացի Հասմիկ Մարտիրոսյանը պարտավոր է 155.97քմ ընդհանուր արտաքին մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար համայնքի վարչական բյուջե 900185061158 հաշվի համարին վճարել 115 900 /հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ, համարել օրինական Հասմիկ Սերյոժայի Մարտիրոսյանի սեփականություն:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝Հասմիկ Մարտիրոսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 05
ք. Ճամբարակ